ՀՀ ներքին գործերի նախարարին կից հասարակական խորհրդի

նախագահ՝ Արփինե ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Դիմող՝ փաստաբան Լուսինե ՄԿՐՏՉՅԱՆԻՑ

(ծանուցման հասցե՝ քաղաք Երևան, Արշակունյաց 9,

Բջջ. հեռ. 091 02 36 36, էլ. փոստ՝ lusine.mkrtchyan.law@gmail.com)

ԴԻՄՈՒՄ

Հարգելի՛ տիկին Սարգսյան,

Սույն թվականի դեկտեմբերի 03–ին տարածված ՀՀ ներքին գործերի նախարարին կից հասարակական խորհրդի կազմի համալրման մասին հայտարարությունը նկատի ունենալով՝ սույն դիմումով որպես անհատ՝ իմ թեկնածությունն եմ ներկայացնում՝ հասարակական խորհրդի կազմում ընդրկման հնարավորությունը դիտարկելու համար:

Միևնույն ժամանակ հարկ է նաև նշել, որ հայտարարությամբ ներկայացված պահանջները, անհրաժեշտ փաստաթղթերը և անգամ դիմումի ձևը և բովանդակությունը առավել բնորոշ են հասարակական կազմակերպություններին և հիմնադրամներին,ուստի սույն դիմումի ձևը և բովանդակությունը և ներկայացված պահանջները մոտարկված ձևով և բովանդակությամբ ներկայացվում են անհատի տեսանկյունից և անհատին բնորոշ՝ հաշվի առնելով, որ փաստաբանները հանդիսանում են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ:

Կից ներկայացվում են՝ ամփոփ տեղեկանքը, հիմնավորումը և հակիրճ վերլուծությունը:

Հարգանքով՝

Դիմող՝ Լուսինե ՄԿՐՏՉՅԱՆ

«17» դեկտեմբերի 2024 թվական